

Ժողովուրդ

42
(2892)

27 մարտի չորեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

✉ ք. Երևան, Արմավյան 22ա/3 (0010)

☎ + 374 10 546423

@ info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ԻՆՉ ՏԱՐԱԾՔՆԵՐ ԵՆ ԶԻՋՎԵԼՈՒ ՎՐԱՄՏԱՆԻՆ



Հայաստանը պատրաստվում է սահմանազատում իրականացնել ոչ միայն Ադրբեջանի, այլ նաև Վրաստանի հետ: Ռեալիզացիայի լուրերը շրջանառվում, որ հայ-վրացական բարձրաստիճան շփումներում Փաշինյանն ակտիվացնում է սահմանազատման-սահմանազման աշխատանքները նաև Վրաստանի հետ՝ նրանց որոշակի տարածքներ զիջելու պատրաստակամությամբ: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է ՀՀ-Վրաստան սահմանագոտու Ջիլիզա գյուղին, որը գտնվում է Լոռու մարզի Ալավերդու շրջանում: Երեկ՝ Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեի հետ հանդիպման ժամանակ, Նիկոլ Փաշինյանը կրկին բարձրացրել է սահմանազատման հարցը: «Այսօր գործընկերոջս հետ առիթ էնք ունեցել քննարկել այս համատեղ հոջակագրի գործնական իրագործման ուղղությամբ հնարավոր է անհրաժեշտ քայլերը: Ուզում եմ ընդգծել, որ այդ հոջակագրում էական առանցք է միմյանց տարածքային ամբողջականության եւ ինքնիշխանության անվերապահ ճանաչումը: Այսօր մենք նաև քննարկել ենք Հայաստանի եւ Վրաստանի միջև սահմանազատման գործընթացի ակտիվացման հնարավորությունները»,- Վրաստանի վարչապետի հետ հանդիպումից հետո հայտարարել էր նա: «Ժողովուրդ» օրաթերթը վարչապետի մամուլի քարտուղար Նազելի Բաղդասարյանից հետաքրքրվեց՝ մասնավորապես որ հատվածներում պետք է սահմանազատում արվի, արդյոք այն ներառում է նաև Ջիլիզա գյուղը, որ խոսվում է, թե հանձնվելու է: «Վարչապետն իր հայտարարության մեջ ասել է՝ ինչ են քննարկել: Վրաստանի հետ ռազմավարական համագործակցության հոջակագրի թեմայի շուրջ քննարկվել է սահմանազատման թեման: Ընդհանուր քննարկվել է, որ պետք է սահմանազատում լինի վաջապետի հայտարարությունից բացի, դեռ այլ բան չկա»,- ասաց նա: Նշենք, որ Հայաստանն ու Վրաստանը պետական սահմանի սահմանազման եւ սահմանազատման հարցը քննարկում են 1992 թվականից, իսկ 1996-ից երկու երկրների միջև գործում են սահմանի դեղին գծի համարակցային հանձնաժողովներ, բայց խիստ պասիվ ռեժիմով են աշխատում:

ՈՐ է կորել «Ճանապարհային դեպարտամենտ»-ը: Իսկ ինչի՞ համար է «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամբ: Այսպիսով, ՀՀ կառավարության՝ 6 օգոստոսի 2021թ. թիվ 1298-Ա որոշմամբ՝ «Ճանապարհային դեպարտամենտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմավորման ձեռով վերակազմակերպվել է «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամբ: Հիմնադրամբի գործունեության հիմնական առարկան եւ նպատակը, ըստ իրենց կայքի, Հայաստանի Հանրապետությունում ճանապարհաշինության ոլորտի ծրագրերի արդյունավետ իրականացման ապահովումն է: Եթե այդպես է, ապա ո՞ր են կորել հիմնադրամբի պատասխանատուները, երբ Հայաստանի գլխավոր մայրուղիները մարտ ամսի ձնաքթի պատճառով անանցանելի են: Ինչե՞ն, անցնենք այս հիմնադրամբի փառահեղ գնումներին: 2023 թվականի հունիսի 23-ին «Ճանապարհային դեպարտամենտ»-ը վերանորոգման աշխատանքներ կատարելու համար 55 մլն 507 հազար դրամ արժողությամբ պայմանագիր է կնքել «ԱԶԱՓՆՅԱԿ ԶՈՆՍԹՐԱԲՇՆ» ՍՊԸ-ի հետ: Պայմանագրով նախատեսվում է վերանորոգել Կառավարության 3-րդ տան առաջին եւ երկրորդ հարկերում «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամբի հատկացված տարածքները: Վերանորոգման մեջ մտնում են նաև քանդման աշխատանքները, որի համար ծախսվել է 784 հազար դրամ: Վերանորոգման մեջ մտնում են նաև հարդարման աշխատանքները, հատակների վերանորոգումը, արտաքին եւ ներքին վիտրաժներ, բեմահարթակի կառուցման աշխատանքները, ներքին առը ջրի մատակարարման համակարգի եւ ներքին կոյուղու համակարգի վերանորոգումը, էլեկտրատեխնիկական մասի եւ օդափոխության համակարգի վերանորոգումը: Վերանորոգման ընդհանուր ծախսերը կազմել են 54 մլն 541 հազար դրամ, սակայն առաջացած չնախատեսվող ծախսերը կազմել է 965 հազար դրամ, ինչի արդյունքում վերջնարդյունքը կազմել է 55 մլն 507 հազար դրամ: Ծեռքի 2 հարկի համար ծախսվեց 55 մլն, սակայն միջադրամային եւ միջմարզային ճանապարհները վերանորոգելու եւ փոսայցնելու համար՝ 0 դրամ, եւ, սրան գումարած, անորակ ասֆալտ, որը մի կաթիլ ջրից քանդվում է:



Ղատական համակարգում քառը շարունակվում է: 4-րդ դատավորն է ճնշումների արդյունքում ազատման դիմում գրում եւ լքում դատական համակարգը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ դատավոր Անդրանիկ Մաացակախյանը դատավորների ներքին «չաթի» աղմկահարույց գրագրության մասնակիցներից մեկն է եղել, սակայն որեւէ բան չի խոսել, կարծիք չի հայտնել, ընդամենը «լայք» է դրել: Եւ, ահա, «լայք»-ի համար նրան ստիպեցին համակարգը լքել: Ավելին՝ լուրեր կան, որ նրան ճնշել են իր հոր՝ Թալինի նախկին քաղաքապետ Մաացակախյանի ղեմ հարուցված քրեական գործի շրջանակներում: Հիշեցնենք, որ ՀՀ քննչական կոմիտեն 2021 թվականին հայտնել էր. «Համայնքի նախկին ղեկավարը 2012թ. օգոստոսից մինչեւ 2021թ. օգոստոսն ընկած ժամանակահատվածում, առանց լիազոր մարմնի համաձայնության, նախ կազմել է պաշտոնական փաստաթուղթ հանդիսացող որոշումներ, որում կեղծ տեղեկություններ է ներառել համայնքին պատկանող, ՀՀ հողային օրենսգրքով նախատեսված սահմանափակումների ցանկում ընդգրկված հողամասերի վերաբերյալ, այնուհետեւ կազմակերպել է իրականացրել է դրանց օտարումը»: «Ժողովուրդ» օրաթերթը դեռ մարտի 7-ին էր գրել, որ հաջորդ դատավորը, որը աշխատանքից ազատման դիմում կգրի սեփական նախաձեռնությամբ եւ կիեռանա դատական համակարգից, Արագածոտնի մարզի դատավոր Անդրանիկ Մաացակախյանն է: Բանն այն է, որ պատերազմի օրերին դատավորները իրենց ներքին խմբում «չաթում», իշխանությունների հասցեին հայիոյանքներ են գրել, որը վերջին շրջանում դատական համակարգի Հուլայի համարում ստացած դատավոր Մաացակախյանը, ըստ մամուլի, տարել է ներկայացրել է քաղաքական իշխանություններին: **Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:**



«Երեւան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկը՝ բոլորին հայտնի ԱՄԾ մեկուսարանը, կփակվի: Կոտայքի մարզում «Արմավյան» քրեակատարողական հիմնարկի կողքը նոր բանտ է ստեղծվելու: Այս նոր ստեղծվելիք բանտ կտեղափոխվի Նուբարաշեն, Վարդաշեն, Դատապարտյալների հիվանդանոց եւ «Երեւան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկների ողջ անձնակազմը՝ դատապարտյալների եւ կալանավորների հետ միասին: «Ժողովուրդ» օրաթերթը արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանից հետաքրքրվեց՝ ԱՄԾ մեկուսարանը փակվելու է արդյոք, ինչին ի պատասխան՝ նախարարը հայտնեց՝ նոր ԶԿՀ ստեղծելուց հետո, այո՛, կփակվի:



ԶՐՈՒՅՑ

«ՄԵՆՔ ՊԱՏՐԱՍՏ ԵՆՔ ՆՄԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ»

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը հարցազրույց է անցրել Kathimerini հունական օրաթերթին, որը ներկայացնում ենք ստորև:

Վարչապետ Միցոտակիսի հետ հանդիպման ընթացքում Ռուբ կարեւորեցիք «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը առեւտրային հանգույցի ստեղծման համար, որը պետք է կապի Հայաստանը Միջերկրական ծովի եւ Հունաստանի հետ՝ անցնելով Թուրքիայի տարածքով: Ինչպէ՞ս կարող է այս ծրագիրը նպաստել Կովկասից մինչեւ Միջերկրական ծով տարածաշրջանային կայունության ու անվտանգությանը:



● Բոլոր ենթակառուցվածքները պետք է լինեն երկրների ինքնիշխանության եւ իրավազրկության ներքո, որոնց տարածքով անցնում են:

● Յուրաքանչյուր երկիր իր տարածքում իր պետական ինստիտուտների միջոցով իրականացնում է սահմանային եւ մաքսային հսկողություն, ինչպէս նաեւ ապահովում է անվտանգությունը:

● Նշված ենթակառուցվածքները կարող են օգտագործվել ինչպէս միջազգային, այնպէս էլ ներքին փոխադրումների համար:

● Բոլոր երկրները միմյանց ենթակառուցվածքներից օգտվում են հավասարության եւ փոխադարձության սկզբունքով:

- Լեռնային Ղարաբաղի վերջին պատերազմը ի ցույց դրեց միջազգային համագործակցության եւ պաշտպանական գործընկերության անհրաժեշտությունը, մասնավորապէս՝ Հունաստանի՝ հայ ժողովրդի կողքին լինելով եւ մարդասիրական օգնություն տրամադրելով: Հաշվի առնելով տարածաշրջանային աճող ռիսկերն ու սպառնալիքները՝ ի՞նչ նշանակություն ունի պաշտպանության մասին հուշագիրը, որը ստորագրել էք ձեր գործընկեր երկրի հետ: Այն պաշտպանական տեխնոլոգիաների զարգացման համար ավելի լայն համագործակցության, թե՛ նույնիսկ ընդհանուր պաշտպանական դրկտորիսի ստեղծման մասին է:

- Հայաստանի անկախությունից ի վեր հայ ժողովուրդը մշտապէս վայելել է Հունաստանի աջակցությունը: Առիթն օգտագործելով՝ կրկին պետք է երախտագիտություն հայտնենք հույն ժողովրդին եւ Հու-

նաստանի կառավարությանը դժվարին պահերին մեր կողքին լինելու եւ ցուցաբերած օժանդակության համար:

Պաշտպանական ոլորտի համագործակցությունը երկարամյա ավանդույթ էր ունի, իսկ նախորդ տարվա դեկտեմբերին ստորագրվեց երկու կառավարությունների միջեւ Ռազմատեխնիկական համագործակցության վերաբերյալ համաձայնագիրը, որը ենթադրում է փորձի, գիտելիքի փոխանակում, համատեղ նախագծերի զարգացում: Հունաստանի ուսումնական հաստատություններում ուսումնառության հնարավորություն ունեն բազմաթիվ հայ կուրսանտներ. սրանք այս ոլորտում փոխգործակցության միայն մի քանի դրվագներ են: Պարբերաբար անց են կացվում համատեղ զորավարժություններ: Չնայած պաշտպանական ոլորտում գերազանց համագործակցությանը՝ այն զարգացնելու մեծ ներուժ կա: Առաջիկայում, հուսով ենք, համագործակցությունն այս ուղղությամբ կընդլայնվի:

Հարկ է միայն համարում եւս մեկ անգամ ընդգծել, որ Հայաստանի համագործակցությունը իր գործընկերների հետ պաշտպանության բնագավառում ուղղված չէ որեւէ երկրի դեմ: Հայաստանի պաշտպանական կարողությունների զարգացումը միտված է պաշտպանելու մեր անկախությունը, ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունը եւ սահմանների անբացփոփոխությունը:

Շարունակությունը կարդացե՛ք ArmLur.am լրատվական կայքում:
Զրույցը Աթանասիոս Կաղիկիոսը

ԿԻԵՎԸ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ Է

Ռուսաստանի Դաշնության ԱԴԾ ղեկավար Ալեքսանդր Բորտնիկովը հայտարարել է, որ «Կրոկուս Սիթի հոլ»-ում տեղի ունեցած ահաբեկչության հետեւում կանգնած են ԱՄՆ-ն, Մեծ Բրիտանիան եւ Ուկրաինան: Նման տվյալներով գերատեսչության ղեկավարը կիսվել է լրագրողների հետ. փոխանցում է TACC-ը:

«Մենք կարծում ենք, որ դա այդպէս է», - ընդգծել է նա՝ պատասխանելով Մոսկվայի մարզում տեղի ունեցած ահաբեկչությանը Լոնդոնի, Վաշինգտոնի եւ Կիեւի մասնակցության մասին հարցին:

Գերատեսչության ղեկավարի խոսքով՝ այս պահին ԱԴԾ-ն ունի ընդհանուր տեղեկություններ եւ զարգացումներ այս հարցում:

ՌԴ Անվտանգության խորհրդի քարտուղար Նիկոլայ Պատրուշեւը հայտնել է, որ Կիեւը ներգրավված է Կրոկուսում տեղի ունեցած ահաբեկչությանը:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆԳ նախարարությունը շրջանառության մեջ է դրել «Ոստիկանության կարգապահական կանոնագիրը» օրենքի եւ հարակից օրենքների նախագծերի փաթեթը, որով կսահմանվեն ծառայողների կարգապահության չափանիշները եւ կարգապահական պատասխանատվության կարգավորումները:

ՆԳՆ-ն առաջիկայում կանցկացնի նաեւ նախագծերի փաթեթի հանրային քննարկմանը նվիրված միջոցառում: Շահագրգիռ ֆիզիկական եւ իրավաբանական անձինք նախագծերի փաթեթի վերաբերյալ իրենց դիտողություններն ու առաջարկությունները կարող են թողնել e-draft.am կայքում:

Նախագծերի փաթեթով առաջարկվում է.

- Ոստիկանության եւ Փրկարար ծառայության կարգապահական կանոնադրերում հստակ սահմանել ծառայողների վարքագծի, գործողությունների վերաբերյալ ակնկալիքները,
- կանոնակարգել կարգապահական խախտումների համար ծառայողներին պատասխանատվության ենթարկելու կարգը՝ նախատեսելով խախտման հստակ չափանիշներ,
- կատարելագործել տույժերի եւ խրախուսանքների կիրառման համակարգը,
- սահմանել էթիկայի հանձնաժողովի ձեւավորման եւ գործունեության առանձնահատկությունները,
- ծառայողական քննության անցկացման ճկուն ընթացակարգ սահմանել,
- Ոստիկանությունում եւ Փրկարար ծառայությունում ընդլայնել ղեկավար անձանց շրջանակը, որոնք կկիրառեն համապատասխան խրախուսանքի եւ կարգապահական տույժի տեսակները,
- Ոստիկանության որոշ գործառնությունների իրականացումը ապահովել քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց միջոցով:

ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՐԳԵՆՏԻՆԱ

ՀԱՆԳԻՊՈՒՄ Է ՈՒՆԵՑԵԼ

Պաշտպանական այցով Բուենոս Այրեսում գտնվող Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը մարտի 25-ին հանդիպում է ունեցել Արգենտինյան Հանրապետության արտաքին հարաբերությունների, միջազգային առևտրի եւ դաշնամուտքի նախարար Գիանա Մոնդինոյի հետ:

Ինչպէս տեղեկանում ենք ՀՀ ԱԳՆ-ի տարածած հաղորդագրությունից, երկուստեք գոհունակությամբ ընդգծվել է երկու երկրների միջեւ առկա քաղաքա-

կան երկխոսության բարձր մակարդակը՝ հիմնված Հայաստանի եւ Արգենտինայի ժողովուրդների միջեւ երկարամյա բարեկամական կապերի վրա: ՀՀ ԱԳ նախարարն ընդգծել է Հարավային Ամերիկայում Արգենտինայի դերը որպէս ՀՀ կարեւոր գործընկեր՝ Նշելով, որ դրա պարզ վկայությունն են նաեւ բարձրաստիճան փոխայցելությունները:

Անդրադարձ է կատարվել երկու երկրների դիվանագիտական դպրոցների միջեւ փոխգործակցության հարցերի:

Հայաստանի եւ Արգենտինայի միջեւ առեւտրատնտեսական հարաբերություն-

ների խթանման համատեքստում ընդգծվել է նաեւ ներդրումային ծրագրերի հետագա խրախուսման կարեւորությունը:

Տարածաշրջանային տրանսպորտային եւ տնտեսական կապուղիների ապաշրջափակման համատեքստում Արարատ Միրզոյանը ներկայացրել է ՀՀ կառավարության կողմից մշակված «Խաղաղության խաչմերուկ» ծրագիրը՝ մատնանշելով դրա միջոցով ընձեռվող տնտեսական եւ կապուղիների զարգացման հնարավորությունները, տարածաշրջանում կայունությանը նպաստելու ներուժը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԿԼԻՆԻՔ

ՈՐՆ Է ՓԱՇԻՆՅԱՆԻ ՀՌԵՏՈՐԻԿԱՆ

ԱՋԱԿՑՈՒՄ Է

Միացյալ Նահանգներն աջակցում է Հարավային Կովկասի բոլոր երկրների շարունակական ժողովրդավարական զարգացմանը, ինքնիշխանությանը, անկախությանը եւ տարածքային ամբողջականությանը...

Ամերիկայի Միացյալ Նահանգների արտաքին քաղաքական գերատեսչությունից նշել են, որ ԱՄՆ-ը ողջունել է ցանկացած բարեխիղճ ներգրավվածություն, որը խաղաղություն է կայունություն է բերում Հարավային Կովկասի երկրներին...

ԹՈՂՆՈՒՄ ԵՆ՝ ՓՈՂ «ԱՇԽԱՏԻ»

Փատաբան Արսեն Բաբայանը Facebook-ի իր էջում անդրադարձել է ՔՊ-ական պատգամավոր Գագիկ Մելքոնյանի հայտարարություններին:

Նա, մասնավորապես, նշել է. «Մի իշխանական պատգամավոր կա, նախկինների ժամանակ էլ բանակում ամենայնուրոտ պաշտոնն էր զբաղեցնում, տարիքն առած մարդ է, գրեթե սպիտակած մազերով, բեղերով ու մեծ քթով...»

Այս պատգամավորն արդեն երկրորդ անգամ է, որ հայկական տարածքի հետ կապված հրապարակային հանգիստ հայտարարում է՝ «...տարածքն աղբբեջանական է, որքան կարելի է ասել: Հո ասելով չի՞, թե հայկական տարածք է»: Ի դեպ, այս պատգամավորը նաեւ Հայաստանի Հանրապետության անձնագիր ունի:

Մի կողմ թողնենք հոգեբանական մասը, թե ինչպես կարող է հայը նման բան ասել:


Հասկանում եք, թե ինչու է նա հանգիստ այդպիսի հայտարարություններ անում. որովհետեւ ինքն ունի պաշտոն, որը թույլ է տալիս ծաղկեցնել իր բիզնեսները Հայաստանում եւ արտասահմանում: Նա ունի որդի, որն ունի պաշտոն եւ հնարավորություն՝ լուրջ փող աշխատելու:

Այսինքն՝ նա այս ամենը հանգիստ հայտարարում է, քանի որ թողնում են՝ փող «աշխատի»: Այսինքն՝ նրան փող են տալիս, որ հանգիստ ասի, թե հայկական այս տարածքն աղբբեջանական է:

Բա հայրենիք ծախելն էլ ո՞նց է լինում: Հո չպիտի՞ Ալիեւի բանկային հաշիվներից ուղիղ փոխանցում արվեր այդ պատգամավորի բանկային հաշիվին...»:

Նիկոլ Փաշինյանը նախորդ երկու-աքթի՝ մարտի 18-ին՝ Տավուշի մարզի Ոսկեղար գյուղի բնակիչների հետ հանդիպմանը, հայտարարել էր, որ, հնարավոր է, մինչեւ շաբաթվա վերջ դաստիարակված լինի, եթե հայկական կողմը հրաժարվի Ադրբեջանի հետ բնառկել սահմանագրաման եւ սահմանագծման հարցերը: Նրա այս հայտարարությունը անորոշություն է անհանգստություն էր առաջացրել սեղացիների մոտ: Պատասխանելով բնակիչներից մեկի հարցին՝ Փաշինյանը հայտարարեց, որ կարելի է հիմա դաշխիճից դուրս գալ ու ասել, որ որեւէ սահմանագրաման եւ սահմանագծման հարց չի լինելու, բայց դա, ըստ նրա, անհեշտամբ չի մնա: «Դա նշանակում է՝ շաբաթվա վերջ դաստիարակված է սկսվելու: Հետ եւ գիտե՛ք՝ ինչ է լինելու դաստիարակված վերջում: Երեւանում, որ մի սեղ իրար սեղանի, դուր ասելու ե՛ք՝ մենք գյուղացի ժողովուրդ էինք, այդքան ինֆորմացիա չունեինք, բա դու այդքան սեղեկություն չունեի՞ր, բա դու ի՞նչ էիր անում», - ասել էր նա:

ArmLur.am-ը վարչապետի խոսնակ Նազելի Բաղդասարյանից հետաքրքրվել է՝ հաշիվն առնելով վարչապետի այդ հայտարարությունը՝ կարող ենք արդյոք արձանագրել, որ առաջիկայում սահմանային նոր լարվածություն է սպասվում, եւ Ադրբեջանը պատրաստվում է հերթական սարսափի գնալ մեր սահմանին: Հարցին ի պատասխան՝ Նազելի Բաղդասարյանը հղում արեց Նիկոլ Փաշինյանի՝ ԱԺ-ում հնչեցրած հայտարարություններին. «Վարչապետը ԱԺ-ում կառավարության հետ վերջին հարցուպատասխանի ժամանակ արդեն անդրադարձել է այդ հարցին. ընդդիմադիրներն այդ հարցը տվեցին, վարչապետն էլ պատասխանել է՝ ինչ կոնտեքստում է նման բան ասել», - ասաց Բաղդասարյանը: Իսկ ի՞նչ էր ասել Նիկոլ Փաշինյանը ԱԺ-ում: Կառավարության հետ մարտի 20-ի հարցուպատասխանի ժամանակ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Քրիստինե Վարդանյանը, դիմելով Նիկոլ Փաշինյանին, ասել էր. «Նկատել էք, որ Դուք վերջերս Ալիեւից ավելի շատ եք սկսել հայ ժողովրդին սպառնալ պատերազմով»:



Փաշինյանն էլ իր հերթին, արձագանքելով պատգամավորի նկատառումներին, որ սպառնում է պատերազմով, ասաց, որ իրենք մեղավոր են նրանում, որ ժողովրդին չեն ներկայացրել ամբողջ իրավիճակը: «Բա ինչի՞ է բանը չէիք ասում, դուք ունեիք տեղեկատվություն, մենք չունեինք տեղեկատվություն, բա ինչի՞ պարտեցի Շուշիում: Կամ էր պետք է ասել, կամ հակառակը. ի՞նչ էր լինելու ձեր ռեակցիան, եթե այն ժամանակ առերեսվեիք իրավիճակին: Ընդ որում՝ ինչ ասում եմ, ապացուցելի է: Ի՞նչ պետք է

ասել. պետք է ասել, որ, ժողովուրդ, Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմում կարող է ունենալ ինքնավարություն, ընդ որում՝ այն արձանագրումով, որ դա լինելու է հայ-ադրբեջանական ինքնավարություն: Դա է եղել 2018 թվականի բանակցային բովանդակությունը, եւ սա ապացուցելի է: Դուք ինձ ասում էիք՝ ինչի եւ ասել՝ Արցախը Հայաստան է եւ վերջ, հիմա ինչի չես ասում՝ Արցախը Հայաստան է եւ վերջ: Սա է ձեր հռետորիկան», - ասել էր նա:

ՔՐԻՍՏԻՆԱ ՍՈՒԵՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ ՄՊԱՍՈՒՄ ԵՆ

Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի եւ խորհրդի անդամները սպասում են վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ հանդիպմանը՝ նոր Սահմանադրության անհրաժեշտության վերաբերյալ նրա հայտարարության հետ կապված:

Այս մասին լրագրողների հետ ճեպագրույցում ասաց արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանը:

«Մենք ունենք շատ նախնական հայեցակարգ, որն ուղարկել ենք կառավարություն, բայց այդ գործընթացում բոլորս ակնառեստե եղանք, որ վարչապետը հանրային քննարկման բերեց նոր գաղափարներ, եւ այժմ սպասում ենք վարչապետի եւ սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի եւ խորհրդի անդամների հանդիպմանը, որից հետո արդեն հանրային իրազեկման միջոցով կներկայացնենք, թե արդյոք կլինեն նոր ուղղություններ եւ փոփոխություններ», - ասաց Մինասյանը:

ԲԱՐԳ ԵՐՁԱՆ

Հայաստանն ու Ռուսաստանը մնում են եղբայրական երկրներ՝ չնայած հարաբերություններում առկա դժվարություններին. այս մասին հայտնում է «ՏԱՍՄ»-ը՝ մեջբերելով Ռուսաստանի Դաշնության նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովի խոսքերը:

Նրա կարծիքով՝ Հայաստանը Ռուսաստանի Դաշնության համար «նույնիսկ ավելին է, քան եղբայրական երկիր»՝ չնայած այն հանգամանքին, որ երկու երկրներն այժմ ապրում են «հարաբերությունների բավականին բարդ շրջան»:

Դմիտրի Պեսկովը նաեւ նշել է, որ «ՌԴ քաղաքացի հանդիսացող հայերի տնտեսական ակտիվությունը դեռեւս կազմում է Հայաստանի ընդհանուր բյուջեի շատ մեծ տոկոս»՝ տարեկան մի քանի միլիարդ դոլար:

«Հուսով ենք՝ երեւանում մեր հարաբերությունների զարգացումը շարունակելու քաղաքական կամք կտիրի, եւ մենք հաջողությամբ կանցնենք այս դժվարին շրջանը», - նշել է Պեսկովը:

ԳՐԱՌՈՒՄ Է ԿԱՏԱՐԵԼ

Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեն Հայաստան կատարած առաջին պաշտոնական այցի շրջանակներում ՀՀ նախագահ Վահագն Խաչատրյանի հետ հանդիպումից հետո կիսվել է իր տպավորություններով՝ մեկնաբանելով, որ քննարկումները նվիրված են եղել հայ եւ վրաց ժողովուրդների միջեւ հարատեւ բարեկամության ամրապնդմանն ու ռազմավարական գործընկերության կարելու դերի ընդգծմանը:

Այս մասին Վրաստանի վարչապետը գրառում է կատարել X-ի իր միկրոբլոգում: «Վերահաստատելով տարածաշրջանում խաղաղության եւ կայունության խթանման Վրաստանի հանձնառությունը՝ մենք նաեւ ուսումնասիրեցինք ընդլայնված համագործակցության ուղիները՝ նպատակ ունենալով մեր երկկողմ հարաբերությունները նոր բարձունքների հասցնել ու նպաստել փոխադարձ բարգավաճմանը», - գրել է Կոբախիձեն:

ՊԱՅԹՅՈՒՆԻ ՅԵՏՔԵՐՈՎ

ԽՈՒՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԳՐԱՍԵՆՅԱԿՈՒՄ ԵՎ ՏՆԵՐՈՒՄ

ArmLur.am-ի բացառիկ սեղեկությունների համաձայն՝ ողջ իրավադատական համակարգը խուզարկություններ է անում «Ազգային ժողովրդական բեռ»-ի գրասենյակում, ինչպես նաև Նոր Նորքի ոստիկանության բաժնի մոտ տպագրության կենտրոնում անձանց բնակարաններում:

Քննչական կոմիտեից հաստատեցին մեր տեղեկությունը և մակրամասներ ներկայացրին:

«2024թ. մարտի 24-ին՝ ժամը 17.00-ի սահմաններում, ՀՀ ՆԳՆ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության Նոր Նորքի բաժնի մի խումբ անձանց մուտք գործելու և սպառնալիքներ հնչեցնելու և պայթուցիկ դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչությունում, ՀՀ քրեական օրենսգրքի 44-155-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 8-րդ կետերով, ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ մասով, նախաձեռնվել է քրեական վարույթ: ՀՀ ԱԾԾ-ի և ՀՀ ՆԳՆ ոստիկանության հետ սերտ համագործակցությամբ իրականացվող քննությամբ առերեսությամբ պարզվել է հետևյալը:

Ս. Հ.-ն, Վ. Գ.-ն և Ա. Մ.-ն, ունենալով հակառակորդական հայացքներ, հանրային իշխանության մարմինների գործունեությունը կազմալուծելու, պետական ծառայող հանդիսացող՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության Նոր Նորքի բաժնի ծառայողներին իրենց պարտականությունները կատարելուց հրաժարվելու, ինչպես նաև իրենց պահանջները կատարելու հարկադրելու նպատակով 2024թ.-ի մարտի 24-ին՝ ժամը 17:00-ից 17:15-ն ընկած ժամանակահատվածում, ապօրինի կերպով ձեռք բերած և յուրաքանչյուրի մոտ գտնվող, ռազմամթերք հանդիսացող երկուսն էլ ձեռք բերած մարտական նռնակներով մուտք են գործել ՀՀ ՆԳՆ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության Նոր Նորքի բաժնի վարչական շենք:

Շենքը պայթեցնելու սպառնալիքով, ձեռքբերում ցուցադրական պահելով վերը նշված, այդ թվում՝ արդեն մարտական վիճակի բերված նռնակները, վերջիններս հերթապահ մասում ծառայություն իրականացնող ոստիկաններից պահանջել են ազատ արձակել իրենց համախոհներին, բացել հերթապահ մասի դուռը, իրենց տալ այնտեղ պահվող զենքերը և ազատել շենքը, որը զուգորդվել է նշված շենքում գտնվող անձանց կյանքից զրկելու, առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու, խոշոր չափերով գույքային վնաս պատճառելու և այլ ծանր հետևանք առաջացնելու վտանգով:



Նրանք հանդիպել են ոստիկանության ծառայողների դիմադրությանը, ինչի պայմաններում Ա. Մ.-ի ձախ ձեռքում պահված նռնակը ընկել է ոստիկանության բաժնի հերթապահ մասի դիմացի հատվածը, և տեղի ունեցած պայթյունի հետևանքով վնասվել է ոստիկանության բաժնի վարչական շենքի մուտքի դուռը, դրա և հերթապահ մասի պատուհանների ապակիները, պատերը և առաստաղը, այդ հատվածում գտնվող գույքը:

Պայթյունի հետևանքով Վ. Գ.-ն և Ա. Մ.-ն ստացել են մարմնական վնասվածքներ և տեղափոխվել բժշկական կենտրոն, իսկ Ս. Հ.-ն, շարունակելով իրենց հանցավոր նպատակները ուղղված գործողությունները, նռնակները ձեռքբերելու պահած, շուրջ 2 ժամ սպառնացել է պայթեցնել ոստիկանության բաժնի վարչական շենքը և ՀՀ-ում իրականացնել հեղափոխություն, սակայն վերջինս վնասագործվել է զինաթափվել է ՀՀ ոստիկանության և ՀՀ ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների կողմից:

Ս. Հ.-ն և Վ. Գ.-ն, ՀՀ քրեական օրենսգրքի 44-155-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 8-րդ կետերով, 308-րդ հոդվածի 1-ին մասով և 335-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքներ կատարելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով, ձերբակալվել են, իսկ Ա. Մ.-ի ձերբակալումը հնարավոր չի եղել վերջինիս առողջական վիճակի պատճառով:

Քննչական խմբի կողմից խիստ սեղմ ժամանակահատվածում կատարվել են հսկայածավալ քննչական և այլ վարույթային գործողություններ, այդ թվում՝ հար-

ցաքննվել են մեկ տասնյակից ավելի անձինք:

Դատարանների թույլտվությամբ և ՀՀ ազգային անվտանգության ծառայության և ՀՀ ոստիկանության օժանդակությամբ նշված անձանց և նրանց հետ առևտրային ունեցող մի շարք այլ անձանց բնակության վայրերում, ինչպես նաև որպես «Ազգային ժողովրդավարական բեռ» կազմակերպության գրասենյակ ծառայող տարածքում կատարվել են երկու տասնյակից ավել խուզարկություններ:

Կատարված խուզարկությունների արդյունքում հայտնաբերվել և վերցվել են քննության համար հետաքրքրություն ներկայացնող փաստաթղթեր և առարկաներ, այդ թվում՝ զենք, զինամթերք, պլաններ, սխեմաներ, թմրամիջոցի նմանվող գանգվածներ և այլն: Մասնավորապես՝ նշված կազմակերպության գրասենյակ հանդիսացող տարածքից հայտնաբերվել են 2 մարտական նռնակ և քննության համար հետաքրքրություն ներկայացնող բազմաթիվ փաստաթղթեր ու առարկաներ:

Կարույթի շրջանակում նշանակվել են դատապայթյունատեխնիկական, դատաքիմիական, նյութագիտական, շինարարատեխնիկական, ապրանքագիտական, դատաբժշկական, դատակենսաբանական և այլ փորձաքննություններ:

Միջնորդություններ են ներկայացվել հսկողություն իրականացնող դատախազին՝ Ս. Հ.-ի, Վ. Գ.-ի և Ա. Մ.-ի նկատմամբ քրեական հետապնդումներ հարուցելու վերաբերյալ:

Նախաքննությունը շարունակվում է:»
ՔՆՆՐ ՄԱՍՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ

ԽՈՒՎԻԳԱՆՈՒԹՅՈՒՆ



ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում ավարտվել է 2023 թ. հոկտեմբերի 28-ին մի խումբ անձանց կողմից պարտկային ծառայության աշխատակիցների օրինական ծառայողական գործունեությանը միջամտելու և խուլիգանություն կատարելու դեպքի նախաքննությունը:

«Նշված օրը՝ ժամը 23:00-ի սահմաններում, տեղեկություն էր ստացվել այն մասին, որ կանչով Երեւան քաղաքի Թբիլիսյան խնուրի մեկնած պարտկային, ինչպես նաև նշված հասցեում հավաքված քաղաքացիների նկատմամբ մի խումբ մարդիկ դրսևորել են բացահայտ անհարգալից վերաբերմունք, ինչից հետո ոստիկանության բաժնի էին տեղափոխվել Կոտայքի մարզի Քանաքեռավան գյուղի 3 բնակիչ՝ երկու եղբայր և նրանց քույրը:

Քննությամբ ձեռք բերված փաստական տվյալներով պարզվել է հիմնավորվել է, որ վերջիններս, գտնվելով Թբիլիսյան խնուրում իրենց ազգականի կողմից տեղի ունեցած ինքնավթարի վայրում և տեսնելով ահազանգի հիման վրա դեպքի վայր ժամանած շտապօգնության, ինչպես նաև ոստիկանության աշխատակիցներին, բռնություն են գործադրել վերջիններիս նկատմամբ, կատարել խուլիգանություն:

Մասնավորապես՝ եղբայրները ձեռքբերով և ոտքերով նախ հարվածել են շտապօգնության մեքենային, ապա բարոյական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելով, հայիոյանքներ և անպարկեշտ արտահայտություններ հնչեցնելով, տեսական ժամանակ խախտել են մարդկանց անդորրը, խաթարել երթուղիների քննաշրջանը:

Այնուհետև, երբ ոստիկանները հասարակական կարգը կոպիտ կերպով խախտող գործողությունները դադարեցնելու օրինական պահանջ են ներկայացրել նրանց, եղբայրները և քույրը, վրոդվելով այդ պահանջից, ոստիկանության աշխատակիցների օրինական ծառայողական գործունեությանը միջամտելու նպատակով բռնություն են գործադրել նրանց նկատմամբ՝ հարվածելով վերջիններիս դեմքին, գլխին և ձեռքերին:

34 և 24-ամյա եղբայրներին, նրանց 37-ամյա քրոջը մեղադրանք է ներկայացվել:

Նախաքննությունն ավարտվել է: Քրեական վարույթի նյութերը՝ նշված 3 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են դատարան՝, - ասված է ՔԿ-ի տարածած հարդարագրության մեջ:

ՍՅՈՒՆԻՔ

ԱՊՕՐԻՆԻ ԾԱՌԱՋԱՏՈՒՄ

ՆԳՆ ոստիկանության ՊՃ Սյունիքի մարզի գումարակի դարեկները մարտի 25-ին՝ ծառայություն իրականացնելիս՝ ժամը 19:00-ի սահմաններում, ապօրինի փայտանյութ սեղափոխելու կասկածանքով, Մեղրի ֆաղափի Չորավար Անդրանիկի փողոցում կանգ-

նեցրել են «ՌԲԱՉ» մակնիշի մի մեքենա:

Ստուգման արդյունքում մեքենայի թափքում հայտնաբերվել է 5 խմ փայտանյութ: Մեղրի բնակիչ 62-ամյա վարորդը փայտանյութի ձեռք բերման վե-

րաբերյալ համապատասխան փաստաթուղթ չի ներկայացրել:

Ոստիկանության Մեղրի բաժնում կազմված փաստաթղթերն ուղարկվել են Սյունիքի մարզային քննչական վարչություն:

Հանգամանքները պարզվում են:

● Ըստ ոստիկանության տվյալների՝ մարտի 22-ից մարտի 25-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 207 դեպք, որից 3-ը՝ նախկինում կատարված:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՀԱՍԱԶԳԵՍ ՉՈՒՆԵՆ

Տավուշի մարզի հջեանի եւ Բերդի տարածաշրջանների անտառներում մեծ թիվ են կազմում ապօրինի հատումները: Վերջերս անտառապահների կոչել են անտառային պարտեկներ, սակայն անտառում նրանց տեղաշարժվելու համար ոչ ձի են տվել, ոչ ավտոմեքենա, ոչ համազգեստ, ոչ էլ զենք: Անտառային պարտեկների աշխատավարձը փոքր է, անտառային պարտեկների մեծամասնությունը, համապատասխան կրթություն չունենալով, չի կարող ապօրինի անտառահատումների վերաբերյալ արձանագրություններ կազմել: Անտառային պարտեկները ենթարկվում են տվյալ անտառատնտեսության տնօրենի պահպանության գծով տեղակալին: Անտառային պարտեկների ինստիտուտի ներմուծումը կոչված էր բարելավելու անտառների պահպանությունը, սակայն հջեան եւ Բերդ համայնքներում դա դրական արդյունք չի տվել:

ԳԱՐՇԱՐՈՏԸ ՉԻ ՎԵՐԱՑՎԵԼ

Հջեանի համայնքի Լուսաձոր գյուղի կողքով՝ միջպետական ավտոճանապարհով երթևեկողները զգում են ծանր հոտ, որը Լուսաձորի անասնապահական ֆերմայի եւ նույն տարածքում առկա պանրագործարանի գործունեության հետեւանք է: Այդ գարշահոտի վերաբերյալ 12 տարի շարունակ բազմաթիվ բողոքներ ենք ստացել Տավուշի մարզի բնակիչներից, բազմիցս բարձրացրել ենք այդ խնդիրը, սակայն հարցը չի լուծվում: «ՀիմնաՏավուշ» գարգացման հիմնադրամի Լուսաձորի ֆերման ստեղծվել է 2012 թվականին՝ Տավուշի մարզի եւ Ֆրանսիայի Օ-դե-Սեն դեպարտամենտի միջեւ ապակենտրոն համագործակցության շրջանակներում: 2016թ.-ի ամռանը Լուսաձորում ոչնչացրել, հորել են Լուսաձորի պանրագործարանում արտադրված 3.5 տոննա պանիրը: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում ենք ուղարկել՝ հարցնելով, թե Տավուշի մարզպետարանն ինչ միջոցներ է ձեռնարկել այդ գարշահոտությունը վերացնելու համար: Մարզպետը ոչ այնքան գրագետ շարադրանքով պատասխանել է. ««ՀիմնաՏավուշ» գարգացման հիմնադրամի Լուսաձորի անասնաֆերմայի եւ պանրագործարանի գործունեության հետեւանքով առաջացած գարշահոտությունը կանխելու հարցին տեղեկացնում եմ, որ հիմնադրամը որեւէ ենթակայություն չունի մարզպետի աշխատակազմի, եւ այն հանդիսանում է մասնավոր ընկերություն, սակայն մեր կողմից բազմաթիվ այցելությունների ժամանակ եղել են խստագույն ցուցումներ, որպեսզի ընկերությունը կիրառի համապատասխան միջոցներ գարշահոտությունը չեզոքացնելու համար»:

ՈՍՎԱՆ ՄԱՐԳՅԱՆ
Տավուշ

Fly Arna

ՎԵՂԻՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՓՉԱՑՆՈՂ ԱՎԻԱՓՈԽԱԴՐՈՂ

ArmLur.am-ը բազմիցս է գրել, որ իսլամական կողմից վսահություն ունեցող եւ հովանավորյալ «Ֆլայ Արնա» («Fly Arna») ավիաընկերությունը խնդիրների առաջ է կանգնել թե՛ ֆինանսական, թե՛ կազմակերպչական:

ArmLur.am-ը նաեւ գրել էր, որ ավիաընկերության լուծարումը հեռու չէ: Եվ այսպես, 2024 թվականի առաջին ամսին հենց ավարվեց «Ֆլայ Արնա» ավիաընկերության գործունեությունը, եւ դադարեցվեցին թռիչքները: Մինչ թռիչքների դադարեցումը հայկական ավիաընկերությունը, որը հայ-արաբական համագործակցության արդյունքում է ստեղծվել, չվերթեր էր իրականացնում դեպի Իրան եւ Ռուսաստան: Վերջին անգամ ընկերությունը հունվարի 16-ին է թռիչք իրականացրել, այն է՝ Երեւան-Թեհրան-Երեւան չվերթը: Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդը (ԱՆԻՖ, ANIF - Armenian National Interests Fund), որի նախագահ Անի Իսախանյանին՝ Էկոնոմիկայի նախկին փոխնախարարին ձերբակալեցին չարաշահումների կասկածով, շատ սերտ կապված է «Ֆլայ Արնա»-ի հետ: Բանն այն է, որ ԱՆԻՖ-ի այն ժամանակվա գործադիր տնօրեն Դավիթ Փափազյանն ու արաբական «Air Arabia» ավիաընկերության գլխավոր գործադիր տնօրեն Ադել Ալ Ալիի միջեւ է կնքվել ավիաընկերություն հիմնելու համաձայնագիրը: ԱՆԻՖ-ը գործում է ՀՀ կառավարության ներքո, իսկ Կառավարությունն իր հերթին այս ծրագրի իրականացման համար ներդրել է 4,5 միլիարդ դրամ: Նիկոլ Փաշինյանը, տեղեկանալով ավիաընկերության անհանդուրժող, անպատասխանատու պահվածքի եւ ուղեւորների, այսպես ասած, «քցել-թռնելու» մասին (այսինքն՝ տոմսերը գնել են, չվերթը չի կայացել, գումարը չի վերադարձվել), որոշել է պատժել եւ հրամայել է լուծարել պետությանը միայն վնաս տվող եւ հեղինակություն փչացնող ավիափոխադրողին: ArmLur.am-ի տեղեկությունների



համաձայն՝ ՀՀ վարչապետի հրամանով մեծ քննարկում է եղել, եւ ստուգայցեր են կատարվել «Ֆլայ Արնա»-ի գլխավոր գրասենյակ: Արձանագրվել է, որ գրասենյակի ամբողջ գույքը, անգամ համակարգիչները, գնվել են ՀՀ կառավարության փոխանցած գումարներով: Ստացվում է, որ «Ֆլայ Արնա»-ն եւ նրան հովանավորող ԱՆԻՖ-ը եւ «Air Arabia» ավիաընկերությունը ոչ մի ծախս չեն կատարել ընկերության համար, գրասենյակը գոյատեւել է միայն կառավարության գումարներով:

